

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 09
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

20.06.2006թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Վ. Դանիելյան, Հ. Պետրոսյան, Գ. Գևորգյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Ա. Ավագյան (*Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Գ. Մարտիրոսյան (*Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ*), Ա. Պետրոսյան (*Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում` երեք հարց.

1. «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին».

/Զեկուցող` Ա. Ավագյան/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1 Հաշվետվություն. «ԱՊՀ երկրներում 2005թ. տվյալներով միջազգային համադրումների ծրագրով աշխատանքների իրականացման համար սպառողական ապրանք-ծառայություն ներկայացուցիչների գնային տեղեկատվության քննարկման և համաձայնեցման նպատակով աշխատանքային սեմինար-խորհրդակցություն»

/Զեկուցող` Գ. Մարտիրոսյան/

2.2 Հաշվետվություն. Եվրասիա Հիմնադրամի «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան» Ծրագրի շրջանակներում Արժույթի Միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից կազմակերպված «ԱՄՀ և Անդրկովկասը 21 դարում» կոնֆերանս.

/Զեկուցող` Ա. Պետրոսյան/

3. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին».

/Զեկուցող` Ա. Ավագյան/

Որոշեցին՝

1. Հավանություն տալ «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի ղեկավարին` կազմակերպել «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի օրենսդրական նախաձեռնության վարույթը:

/Արձանագրային /

/Զվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1 Հաշվետվություն. «ԱՊՀ երկրներում 2005թ. տվյալներով միջազգային համադրումների ծրագրով աշխատանքների իրականացման համար սպառողական ապրանք-ծառայություններկայացուցիչների գնային տեղեկատվության քննարկման և համաձայնեցման նպատակով աշխատանքային սեմինար-խորհրդակցություն»

/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն ԱՊՀ երկրներում 2005թ. տվյալներով միջազգային համադրումների ծրագրով աշխատանքների իրականացման համար սպառողական ապրանք-ծառայություններկայացուցիչների գնային տեղեկատվության քննարկման և համաձայնեցման նպատակով աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2.2 Հաշվետվություն. Եվրասիա Հիմնադրամի «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան» Ծրագրի շրջանակներում Արժույթի Միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից կազմակերպված «ԱՄՀ և Անդրկովկասը 21 դարում» կոնֆերանս.

/Զեկուցող՝ Ա. Պետրոսյան/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն Եվրասիա Հիմնադրամի «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան» Ծրագրի շրջանակներում Արժույթի Միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից կազմակերպված «ԱՄՀ և Անդրկովկասը 21 դարում» կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան